

ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 8-ին, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պատասխանատու պաշտոնեությունը, Ճեմարանի հանդիսասրահում, համախմբվել են ամանորի ավանդական սեղանների շուրջ, գոհությամբ, լավագույն հուշերով և զգացումներով ճանապարհելու 1964 թվականը և հավատով, հույսով դիմավորելու նոր տարին։

Որոշյալ պահին ժամանում է Նորին Ս. Օծությունը և օրհնում ամանորի սեղանը։

Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվում է ամանորի ջերմ, հայրենասիրական մթնոլորտ։

Գործադրության է դրվում գեղարվեստական մի առանձին հայտագիր՝ նվիրված օրվա խորհրդին և նշանակության։

Գ դասարանի ուսանող Ս. Հալեպլյանը արտասանում է Վ. Թեքեյանի «Ադոթք վաղվան սեմին առջև» բանաստեղծությունը։

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, հանուն դասախոսական կազմի շնորհավորելով Վեհափառ Հայրապետի նոր տարին, ասում է.

«Վեհափառ Տե՛ր.

Նոր տարվա խորհրդավոր այս պահին, նորից հավաքված այս սուրբ հարկի տակ, նստած ամանորի սեղանների շուրջ, մեզանից յուրաքանչյուրի մտքի առաջով անցնում է հին տարվա արդեն իսկ պատմություն դարձած օրերի շարանը։

Որպես ժողովուրդ և Եկեղեցի, անցած տարվա օրերին կարողացել ենք մեր ուժերի չափով մի նոր քար, մի բահ շաղախ կա դնել մեր ժողովրդի եկեղեցական, մշակութային, տնտեսական կյանքի զարգացման մեջ, ամոթով չմնալով մեր պապերի նվիրական հիշատակների առաջ։

Նոր տարի է, բարեմաղթությունների ս շնորհավորությունների օր։ Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, ինձ ուրախություն է վիճակված շնորհավորելու, Վեհափառ Տե՛ր, Ձեր նոր տարին ջերմ, սրտագին բարեմաղթություններով։

Ամանորի առթիվ, մեր բոլորի սրտագին բարեմաղթությունն է, որ Աստված Իր հովանին անպակաս անի կրթական այս հաստատության վրա, և Դուք երկա՜ր ու երկա՜ր տարիներ հովանավորեք և առաջնորդեք այն, Աստուծո օրհնությամբ և սիրով մեր ժողովրդի։

Այս ուրախ առթիվ, մեր ջերմագին շնորհակալությունը և երախտագիտությունը նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին, որը միշտ և ամեն առթիվ իր բարյացակամ վերաբերմունքն է ցուցաբերում Ճեմարանի կարիքների համար։

Ջերմ շնորհակալություններ նաև Գերագույն Հոգևոր Խորհրդին, վերստուգիչ հանձնաժողովին և Մայր Աթոռի միաբանու-

թյան բոլոր անդամներին, որոնցից շատերը վանական, վարչական իրենց պարտակատարությունների կողքին, սիրով դասավանդում են Հոգևոր Ճեմարանում, բոլորն էլ մեր Ճեմարանի նախկին սաները։

Այս պահին, մեր շնորհավորական և երախտագիտության խոսքը կցանկանայինք ուղղել նաև Հոգևոր Ճեմարանի բարի և հավատավոր բարերարներին, որոնք, Վեհափառ Տե՛ր, սիրով և զոհողությամբ թեթևացնում են Ձեր ուսերի վրա դրված այս հաստատության նյութական ծանրությունը։ Թո՛ղ Աստված վարձահատույց լինի բոլոր նրանց, որոնք բարոյապես և նյութապես օգնում են կրթական այս հաստատության գոյության, բարգավաճման և ապագայի համար։

Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, հանուն Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, մատչել ի համբույր Ձեր Ս. Աջին, բարեմաղթելով Ձեզ երկար և արևոտ բազում օրեր։

Շնորհավոր լինի Ձեր նոր տարին, Վեհափառ Տե՛ր»։

Լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը առաջին բաժակն առաջարկում է հոտնկայս բարձրացնել Մայր Աթոռի անսասանության և նրա արժանավոր Գահակալ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց հայրենասեր և շինարար Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց և արևշատության համար։

Դահլիճով մեկ հնչում է վեհ ու տոնական «էջ Միածինն ի Հօրէ» շարականը։

Լսարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանն արտասանում է Պ. Սեակի «Նոր տարի» քերթվածը, որից հետո, նույն լսարանի ուսանող Դավիթ Դիլանյանը, հանուն ուսանողության, ընթերցում է շնորհավորական մի ուղերձ։

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակն է բարձրացնում հայ ժողովրդի պայծառ ապագայի, Մայր Հայրենիքի խաղաղության, բարգավաճման և հայրենի կառավարության հայրենաշեն ձեռնարկների հաջողության կենաց, մաղթելով, որ նոր տարին խնդություն բերի բոլոր հայ երդիկներին, ծովանան բարին ու բերքը մեր աշխարհի և օրհնվի վաստակը արդար հայ մտքի և բազուկների բոլոր հորիզոնների տակ, և բոլոր մարդիկ լինեն եղբայր, ընկեր ու հարազատ։

Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ է կատարում «Երևան» (Կոտոյան), «Հայոց գինի» (Ա. Խաչատրյան), «Խնջույքի երգ» (Մ. Միրզոյան) խմբերգերը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանը բաժակ է առաջարկում Մայր Աթոռի միաբանության կենաց։

«Զանձառելի Լուսոյ Մայր» շարականից հետո, Բ դասարանի ուսանող Հ. Հակոբյանը արտասանում է «Նոր տարի» ռուսերեն բանաստեղծությունը, իսկ Բ դասարանցի Ա. Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է «Արևելյան պար»-ը։

«Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս Ա. Հատիտյանը բաժակ է բարձրացնում Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի, խմբագրական կազմի անդամների կենաց։

Երգչախումբը կատարում է «Սեղանն է առատ» խմբերգը։ Ա. Գալստյանը նվագում է Շոպենի «Վալս»-ը դաշնամուրի վրա, իսկ լսարանի ուսանող Ե. Բաղրամյանը արտասանում է Ն. Զարյանի «Օրացույց»-ը։

Մայր Տաճարի լուսարար և Հոգևոր Ճեմարանի դասախոս Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը առաջարկում է բաժակ բարձրացնել Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, Մայր Աթոռի տպարանի տեսուչ Խ. Սամվելյանի և պաշտոնեության կենաց։

Ճեմարանի վերակացու բարեշնորհ Ժիրայր սարկավագ Գալփաքյանը, ընդհանուր ծիծաղի մեջ, հրապարակում է նոր տարվա առթիվ իր գրած «կաղանդչեքներ»-ը։

Երգչախումբը, Ճեմարանի երաժշտության դասախոս Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, կատարում է Կոմիտաս վարդապետի «Լո լո»-ն, «Փեսին գովքը», Սայաթ-Նովայի «Քամանչա»-ն և ժողովրդական «Ֆորկա-ֆորկա» խմբերգերը։

Մի պահ հանգում են սրահի լույսերը և դահլիճը խոր լռության մեջ ունկնդրում է «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» երգը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի կատարմամբ։

Ոտքի վրա է Վեհափառ Հայրապետը, ամանորի առթիվ իր պատգամները և օրհնությունները տալու բոլոր ներկաներին։

Նորին Ս. Օծությունը խոսում է հավատով, լավատեսությամբ, հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու և Մայր Հայրենիքի սերը մի անգամ ևս ջերմացնելով բոլոր ներկաների սրտերում։

Երգվում է «Խորհուրդ մեծ» շարականը։

Երեկույթը վերջանում է «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։